՝ԲՈՒԺԱՌՈՒՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԽՆԱՄՈՂՆԵՐԻ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ (PATIENT AND CAREGIVER ONCOLOGY QUALITY COUNCIL, POCQ)

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿ

ԱՆԱՄՆԵԶ

Միչիգանի ուռուցքաբանության որակի գծով կոնսորցիումը (Michigan Oncology Quality Consortium, MOQC) խումբ է, որը ձևավորվել է 2009 թվականին, որի նպատակն է բարելավել նահանգում քաղցկեղով հիվանդներին մատուցվող խնամքի որակը: MOQC-ն ստանում է աջակցություն Blue Cross Blue Shield of Michigan (BCBSM) կողմից, իսկ աշխատանքը համակարգվում է Միչիգանի համալսարանում (University of Michigan): MOQC-ն կենտրոնացած է քաղցկեղով բոլոր հիվանդների վրա, հատկապես նրանց, ովքեր ստանում են քիմիոթերապիա՝ ապահովագրությամբ կամ առանց դրա: MOQC-ն բարելավում է խնամքը՝ օգտագործելով հավաքագրված տվյալները որպես (Quality Oncology Practice Initiative, QOPI®) ծրագրի մի մաս՝ թիրախավորելով խնամքի ոլորտները, որոնք բարելավվելու կարիք ունեն, և աշխատելով բժշկական և գինեկոլոգիական ուռուցքաբանների և նրանց թիմերի հետ՝ փոփոխություններ մտցնելու իրենց աշխատանքում՝ խնամքի բարելավման նպատակով:

MOQC-ն ձևավորել է POQC-ն՝ բարձրացնելու հիվանդների, նրանց ընտանիքների կամ խնամակալների դերը մեր Կոնսորցիումի աշխատանքում: POQC-ի անդամներն աջակցում են մեր Ղեկավար կոմիտեին և մեր աշխատանքին՝ ղեկավարելով նոր նախագծերի մշակումը և կիսելով մեր աշխատանքը համայնքի և այլ շահագրգիռ խմբերի հետ:

POQC ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

POQC անդամները կարող են.

- Կիսվել պատմություններով այն մասին, թե ինչպես են նրանք բախվել առողջապահական համակարգ մուտք գործելու դժվարություններին և գաղափարներով այն մասին, թե ինչպես կարող են համակարգեր ստեղծվել հիվանդներին և սիրելի մարդկանց ավելի լավ սպասարկելու համար:
- Ֆոկուս խմբերում արտահայտել հիվանդների և խնամողների կարծիքը կամ ծանոթանալ հիվանդներին վերաբերող նյութերին

POQC-Ի ՇԱՐՔԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

MOQC-ին և MOQC-ի աշխատանքին աջակցություն ցուցաբերելուց զատ, POQC-ն միշտ ձգտում է ընդլայնվել: Մենք շահագրգռված ենք ունենալ հիվանդներ և խնամակալներ, որոնք բարձրաձայնում են հիվանդների խնդիրները, ներառյալ.

- Փոքրամասնություն կազմող խմբերի հիվանդներ և խնամակալներ
- Ներկա պահին բուժում ստացող հիվանդներ, ներկայումս բուժում ստացող հիվանդների խնամակալներ
- Տարբեր տարիքի և ախտորոշման հիվանդներ, տարբեր տարիքի և ախտորոշման հիվանդների խնամակալներ
- Հիվանդներ և խնամակալներ, ովքեր թերի բժշկական օգնություն են ստացել

MOQC-ի և/կամ POQC-ի անդամները կկապվեն ուշադրության կենտրոնում գտնվող հիվանդների կամ խնամակալների հետ և կնշանակեն առանձին հանդիպումներ՝ քննարկելու մասնակցությունը:

ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ
Vanessa Aron, ծրագրի ղեկավար
varon@moqc.org • 734-615-1796

MOQC
MICHIGAN ONCOLOGY QUALITY CONSORTIUM

Blue Cross Blue Shield of Michigan
Nonprofit corporations and independent licensees of the Blue Cross and Blue Shield Association